

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԱԳԱՔԱՆԳԵԼՈՍ ԸՍՏ ԱԼՓՐԷՏ ԿՈՒԴԵՄԻՏ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՅ

(Բազմաձև, հատոր 1է, էջ 3):

Ի գլ. 166, էջ 625 համառոտաբար այն նախընթաց հատուածին իմաստն ալ յիշատակելը, թէ « Էւ զայն 'ի պա-
« տուհասին լինել 'ի կերպարանս ան-
« ասնոցն ոչ ամօթ համարեցաւ պատ-
« մել նմա: Էւ զհամբերութիւն նահա-
« տակեալ վկայիցն քաջութեան, և որ
« գործք գործեցան, և որպէս բնակու-
« թիւն զօրութեան նոցա », խիստ նշա-
նաւոր է. այսինքն թէ՛ վաղարշապատ քաղաքն որ սրբոց պաշտաման տեղն է՝ նախընթաց հատուածին մէջ նախա-
պատիւ տեղեկութիւնն է. երրորդ ան-
գամ՝ ի գլ. 168, էջ 655, յորում Տըր-
դատայ առ Կոստանդիանոս երթալուն պատմութիւնը կը լմբնայ, կ'ըսէ, թէ
« Ապա հրաժարեալ 'ի ծիրանափառ
« օգոստականացն և 'ի սրբոյ կաթողի-
« կոսէն զային հասանէին յեր-
« կիրն Հայոց յԱյրարատ գաւառ 'ի
« վաղարշապատ քաղաք 'ի հանդըս-
« տակայս սրբոցն, և բերէին զպարգևս
« բերեալս անդստին, զոսկին և զար-
« ծաթն և զպատուական կարասին, 'ի
« նուէրս սպասու Աստուծոյ եկեղեցւոյն

« և 'ի տունս նուիրաց սրբոց վկայիցն
« դնէին. նա և զտուեալ զոսկի սպասս
« կայսերն՝ 'ի նոյն հանգիստ սրբոցն տա-
« յին »: Համաձայնութեան այս արտա-
քին կերպարանքին հետ՝ ներքին մ'ալ
կայ. Հռիփսիմեանց թէ վկայաբանու-
թեան և թէ նշխարաց փոխադրութեան
մէջ կրկին նշանները, երևակայոտ նկա-
րագիր և եկեղեցական դասակարգու-
թեան հակամիտութիւն՝ հօս ալ կան.
որոց և ոչ նշմարը կայ Գրիգորի առա-
քեական ջանիցը վրայ խօսող հատուա-
ծին մէջ: Տըդատայ 70,000 զօրօք առ
Կոստանդիանոս երթը՝ կը համապա-
տասխանէ Հռիփսիմեանց 70 ընկերաց
և ընկերահեաց Հռովմէն 'ի վաղարշա-
պատ փախուստն, և այն պատիւները
զոր Գրիգոր մեծն Կոստանդիանոսէն
կ'ընդունի՝ նման յարմարութիւն մ'է
այն արտաքոյ կարգի հպատակութեան,
զոր վկայարանները շինելու ատեն Տըր-
դատ ըրեր էր Գրիգորի: Անտարակոյս
է ապա թէ երկու հատուածն ալ նոյն
աղբերէն են:

Մէկ հատուածն 'ի միւսէն կը զա-

տուի Լուսաւորչի առաքելական և կաթողիկոսական գործնական ջանքից նկատագրութեամբ: Այն ալ ըստ ամենայնի նոյնաձև չէ: Երկու՝ մանաւանդ թէ երբ անգամ, եթէ ամբողջ յիշատակութիւնները հաշուենք, (Գլ. 154, 625) եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը կը յիշատակէ. 'ի Գլ. 154, 629, 630 կ'ըսէ. « Եւ զոմանա յորդուցն քրմացն առեալ « զառաջատունս առնէր, փոյթ ուսման « 'ի վերայ ունէր . . . որ յաշտիճան եպիսկոպոսութեանն էին արժանի կալլ, առեալ ձեռնադրութիւն 'ի նմանէ. որ առաջնոյն Աղբիւնոս անուն, որ ապա կողմանցն եպիսկոպոսական գեւորդն լինէր վերակացու. երկրորդին՝ Եւստակիոս, որ 'ի կողմանս վայրացն « Բասենոյ կացեալ լինէր հովիւ. երկրորդին՝ Բաստ, չորրորդն՝ Մովսէս, « հինգերորդն՝ Եւսեբիոս, վեցերորդն՝ Յովհաննէս, եօթներորդն՝ Ագապէս, « ութերորդն՝ Արտիթէս, իններորդն՝ Արսուկէս, տասներորդն՝ Անտիոքէս, « մետասաներորդն՝ Տերիկէս, երկուտասաներորդն՝ Կիրակոս . . . : Եւ զայլ լցն անուանս թէ և կամիցի ոք, ոչ կարացէ շարժել » : Ի հակառակէն 'ի Գլ. 138, 637 կը լսենք. թէ Գրիգոր « Բագմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս իշխանութեանն իւրոյ. և որ եպիսկոպոսացն « յաշտիճան ձեռնադրեցան 'ի նմանէ, « աւելի քան զորեք հարիւր եպիսկոպոսս, որ կացին տեսուչս տեղեաց « տեղեաց: Իսկ զկարգս երիցանց և « կամ սարկաւազաց կամ անաղանդսաց, և որ այլ ևս 'ի պաշտօն Տեառն « կային, անթիւք էին 'ի բագմութենէ » : Գրիգոր վերջի երկու կտորուանքն չեն կրընար մի և նոյն մատենագրին գործը ըլլալ: Երկու կտորն ալ միութեան թելը կ'ընդհատեն. առաջնոյն մէջ կը յաւելցնէ՝ թէ անմիջապէս Գրիգոր անձամբ կրօնաւորաց բարի օրինակ տալու համար երբեմն երբեմն կրօնաւորաց հետ կը քաշուէր կ'առանձնանայր. իսկ հեռաւորութեան ատեն զԱղբիւնոս վերակացու կը թողուր. հիմանադրութեան

նէ ընտրուած եպիսկոպոսաց վրայ եղած յաւելումն, և մասամբ առաջիններն ալ կրկնելով՝ կը կապէ գպրորաց վրայ տուած տեղեկութեան հետ, զորս Տրդատ Լուսաւորչի յորդորանք կը լինէր՝ քրմաց տղաքը կրթելու համար. սակայն այս ալ անպատճառ չէ, որովհետեւ Աղբիւնոս առջի հիմանոս եպիսկոպոսն յիշուեցաւ, ասոր վրայ տեղեկութիւն մը տալ կ'ուզէ, և իրաւունք չկայ այդերաց փոփոխութիւն մը ենթադրել:

Երկրորդ կտորին մէջ՝ դիմացնիս ծանօթութիւն մը կը գնէ՝ թէ Գրիգոր առանձնացած էր, կը յաջորդէ ուրիշ մ'ալ թէ թագաւորն շատ աղաչեց որ Գրիգոր միշտ քովը մնայ. երկու կտորն 'ի հարկն մէկտեղ կը քալեն. թէ Գրիգորի ձեռնադրութիւնն և թէ ուխտին զոր Տրդատ իր հպատակացը հետ մէկտեղ կ'ընէ, անարատ վարդապետութեանց հաւատարմամբստեղ վրայ եղած միջանկեալ կտորն՝ պարզ արտաքին յարգար խառնուրդ մ'է, որ զանազան աղբերաց մեքենական միաւորութենէն առաջ կու գայ: Աս պայպէս ընդունելէն վերջը՝ զատ զատ պէտք է առնուլ այս զանազան աղբիւրները այն պարբերութեան մէջն ալ որ Հովսիփմեանց նոյն խարաց փոխադրութիւնն և Տրդատայ առ կոստանդիանոս երթալուն պատմութիւնը կ'աւանդէ: Գրիգորի իր աշակերտացն ըրած այցելութիւնը, որուն կրկնութենէն Տրդատայ 'ի Հռոմ՝ երթին հատուածն իբրեւ միջանկեալ ճանչցանք վերը, քիչ մը տարբեր երրորդ անգամ մ'ալ դիմացնիս կ'ելլայ, Գլ. 116, էջ 643. « Ապա և ինքն իսկ « մեծն Գրիգորիոս ելանէր զտեղեղքն « կարգելովք և զգաւառքն աշակերտ « տելովք յաշխարհին Հայոց զուարթա « ցուցանել, նորոգել և հաստատել » : Այս տեղւոյն և միւս նման կտորին Գլ. 116, էջ 645 մէջտեղը պարբերութիւն մը կայ որ խիստ վերացեալ բացատրութիւններով թագաւորին բարեպաշտութիւնը կը ներբողէ, փակագծիւ գոցենք կամ ջնջենք պարբերութիւնն, մէկ կողմ

մէն գեղեցիկ կերպով կը միանայ վերջին միջանկեալ կտորին հետ, որուն վերջերը Տրդատայ իր ժողովրդեան հետ տը բրած ուխտադրութիւնը կայ, և միւս կողմէն կ'երթայ կը հասնի Կոստան. զիանոսի բարեգործութեանց պատմութեանը, որոց համարը զՏրդատ կը յորդորէր որ երթայ տեսնայ զԿոստան. դիանոս: Նոյն աղբերաց հետքերն՝ նախ ընթաց զլուսնեւորու մէջն ալ կը տեսնուին, 'ի Գլ. 176, էջ 626. կը նկարագրէ՝ թէ Գրիգոր « հասանէր յառաջա. « գոյն 'ի դաստակերտն իւր յԻրոտան. « տակն յայրարատեան գաւառին 'ի վա. « զարչապատ քաղաքն, ուստի նախ գա. « ռաջինն աստուածասաստ հրամանացն « լինէր սկիզբն. ուր նախ նշմարեացն « և նշանակեալ կանգնեաց զնիշխաչին « սրբոյ. ուր և սուրբ վկայքն Աստու. « ծոյ զեռեղեցան և սոցա վկայարանքն, « և կանգնեաց զսեղան Աստուծոյ 'ի « հանդիստ սրբոցն. և զնկարեալ տեղի « տանն Աստուծոյ շինեաց՝ զցուցեալն « նմա 'ի տեալեանն՝ զյառաջագոյն « զորոյմեայն իւր. և կանգնեաց անդ « զսեղանն փրիստոսի: Սոյնպէս և 'ի « տեղի մեհնիցն զոր կործանեաց յա. « ռաջագոյն. սոյնպէս և յառաջագոյն « տեղիս՝ յաշխարհս և 'ի գաւառս առ. « հասարակ սոյն օրինակ գործեաց « բազմացոյց զամենայն եկեղեցիս, և « կացոյց քահանայս. և քրիստոսեան « զորոյմովն զամենեւին առ հասարակ « ընծայեցուցանէր լինել ամենեցուն « Հոգւովն սրբով՝: Այս ամեն բաներն անյարմար են. որովհետեւ Գրիգոր յետ դարձին՝ կանխեր խօսեր էր երկայն բարակ պատրաստութեանց վրայ, եկեղեցեաց շինութիւնն և քահանայից ձեռնադրութիւնն ալ վեր 'ի վերոյ կը յիշատակուի 'ի Գլ. 174, էջ 624: Զնշենք կամ փակագծի մէջ առնունք աս կտորն ալ, ոչ միայն կը միանայ ճշդիւ պատմութեան ամբողջութեան հետ, այլ և քահանայից ձեռնադրութեան վրայ խօսող կտորին վերջին խօսքերը՝ կանխառ մեր վերը փակագծի մէջ առած կտորին սկզբնաւորութենէն ալ անդին կ'ան.

ցնին. Գլ. 158, էջ 637, ուր որ եպիսկոպոսաց ընտրութեան պատմութիւնը կայ: Դիւրին չէ որոշել թէ աղբիւրները ինչ վերաբերութիւն ունին իրարու հետ այն հատուածոց մէջ, որոնք Գրիգորի կաթողիկոս ընտրուիլը, 'ի Կեսարիա երթը, ձեռնադրութիւնն և դարձը կը պատմեն: Մինչդեռ Յաշտիւատ և Բազայառիձ գիւղաքաղաքաց տաճարներու կործանման նկարագիրն՝ որ մեծ կապ ունի այս բաներուս հետ՝ իր ճոխ դիցարանական տեղեկութիւններով և իր տեղեկ տեղադրութեամբ կը ցուցընեն թէ արժանաւոր աղբիւրէ մը քաղուած են, որ Լուսաւորչայ Հայաստանի գաւառաց մէջ ըրած առաքելական ջանքը կը նկարագրէր, 'ի հակառակէն առ Ղևոնդիոս ուղղեալ և 'ի Ղևոնդիէ գրեալ (Գլ. 137, էջ 598 և 'ի Գլ. 145, էջ 613) նամակաց մէջ՝ կը յիշատակուի Հռիփսիմեանց նահատակութիւնն և անկէ կախմունք ունեցող Տրդատայ խոզակերպութիւնն և փառաւոր հանդիսին եկեղեցական ոգւով սովորական նկարագրութիւնը, որով սուրբ ճամբայ կ'ըլլայ դէպ 'ի Կեսարիա երթալու, և անոր տուած պատիւն ալ որոշակի ուրիշ աղբիւր մը կը ցուցընեն, որուն նոյնութիւնը մեղի արգէն ծանօթ աղբեր հետ՝ անտարակուսելի է, որ և կը վկայէ թէ Գրիգորի քարոզութիւնը՝ Հռիփսիմեանց նշխարաց փոխադրութեան հետ կապ ունի: Տաճարաց կործանմունքէն անբաժան է սրբոյն Յովհաննու Մկրտչի և Աթանազիոսեայ վկային նշխարաց պաշտօնին հաստատութիւնը. ուստի վերջաբանը այս խօսքերէն սկսեալ « Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ հռչակել, և այլն » (Գլ. 150, էջ 623) ընտիր աղբիւրէն է: Գաւառագոյն թագաւորին և ժողովրդեան մեծագոյն մասին մկրդութեան վրայ խօսք կ'ըլլայ, որոց հրաման տուեր էր Գրիգոր՝ ամիս մը պահօք և աղօթիւք սպասել, մինչդեռ ինքն իսկ Գրիգոր Կեսարիայէն բերած կրօնաւորաց հետ տեսակ տեսակ հոգեւոր կըրթութեանց ետեւէ էր: Ասիկայ յիշեցն

ետքը՝ կ'ըսէ թէ (Գլ. 149, էջ 620)
 « Եւ եդ. անդ հիմունս և յինեաց եկե-
 « ղեցի. և զնշխարան զոր ունէր յոսկե-
 « ռաց սրբոյն, ի տէրունական տանն
 « բնակեցուցանէր: Սոյնպէս և ընդ ա-
 « մենայն կողմանս գաւառացն դնէր
 « հիմունս եկեղեցւոյ, և ուղղէր սեղանս,
 « և կացուցանէր քահանայս »: Ապա այս
 բացադրութիւնը. « Իսկ 'ի ընու կետին
 եղելոյ պահոցն կատարելոյ », մէկէն մը-
 կրտութէ պատմութիւնը կը սկսի: Այս
 կտորն՝ որ ամենեկին անյարմարաբար
 միութիւնը կ'ընդհատէ՝ պէտք է որ ըստ
 իմաստին ընտիր աղբիւրէն ըլլայ, և իր
 աւարտն ալ խիստ յարմար կերպով
 մերձաւորագոյն հատուածին սկիզբը կը
 լինայ, զոր արդէն ապացուցինք: Իսկ
 այն շրջաբանութիւնները որոնք սքան-
 չելեօք եղած մկրտութեան հանդէսը կը
 նկարագրեն, պէտք է որ ուրիշ աղբիւ-
 րէ ըլլան, զոր մենք համառօտաբար
 կ'ընտրակոն աղբիւր ուղեցինք անուա-
 նել, և վերջին միջանկեալ հատուա-
 ծին իմաստը կամ բովանդակութիւնը՝
 մկրտութեան հանդիսի վերջաբանու-
 թեամբը յարմար կերպով կ'աւարտի:
 Ընտիր աղբիւրին կտորին մէջ գիտե-
 լի է և քաղաքագեօղն, որուն մէջ սրբ-
 օյն Յովհաննու Մկրտչի և Աթանա-
 դինեայ վկային տօնը պիտի հռչակուէր:
 Նոյն նպատակաւ ալ արդէն յառաջա-
 դոյն 'ի Գլ. 144, էջ. 612 երկու ան-
 գամ Բագուան քաղաքագեօղն կը յի-
 շատակուի, « որ անուանեալ կոչի 'ի
 « պարթևական լեզուէն » (այսինքն հայ-
 « կական) Դիցաւան: Ասիկայ ուրիշ տե-
 դէ է, ('ի Գլ. 134, էջ 593) բաղդատու-
 թեամբ ալ յայտնի է, յորում Գրիգո-
 րի առաքելական ջանիքը նկարագրու-
 թեան ատեն՝ քաղաքագեօղն կը յի-
 շուի, « 'ի գիւղն զոր Բագայառիճն կոչեն՝
 ըստ պարթևարէն լեզուին »: Այն գիւ-
 ղաքաղաքին կրկին անունները պատիկ
 հատուածով մը իրարմէ կը դառուին.
 « Իսկ Գրիգոր՝ զի լցցէ զկողմանս կող-
 մանս եկեղեցեօք և քահանայիւք և
 պաշտօնէիւք և ամենայն աստուածա-
 դորմ սպասաւորութեան կարգօք, և

լուսաւորեսցէ զբազումս՝ մկրտութիւն
 առնելով, հատուած մը որ հոս ամբող-
 ջութեան կը վերաբերի, որովհետեւ
 թագաւորին երկար սպասելուն պատ-
 ճառը կուտայ՝ ամենեկին նոյն իմաստով
 ծանօթութիւն մը՝ այն տեղեկութենէն
 անմիջապէս առաջ՝ թէ Տրդատ ամբողջ
 բանակին, Աշխէն տիկնոջ և խոսրովի.
 դուխտ քրոջը հետ մէկտեղ վաղարշա-
 պատ գնաց սրբոյն Գրիգորի հանդիպե-
 լու համար: Այս տեղեկութեան թէ
 կրկնութիւնն և թէ իմաստի նշանութիւ-
 նը՝ երկրորդ կղերական աղբիւր մ'ալ
 կ'ենթադրեն. որովհետեւ այս տեղեկու-
 թեան մէջ և ոչ այլ ուրեք կը յիշուին
 երկու արքայազն տիկնայք: Բայց վեր-
 ջին կրկնութիւն մ'ալ այս բառերուն
 մէջ կայ. Գրիգոր իր հետ եղող աւե-
 տարանին սպասաւորաց հետ կու գար
 նպատ լերան ստորութեւ կը հասնէր.
 որովհետեւ ասիկայ ուրիշ բան չէ՝ բայց
 եթէ անմիջապէս յառաջ յիշուած 'ի
 Դիցաւան հասնելուն ուրիշ բացատրու-
 թիւն մը. որով կրնայ ըլլալ որ այս ըն-
 տիր աղբիւր պատմութեան մէջ կղե-
 բական աղբիւրէն եղած յաւելուած ըլ-
 լայ:

Երկու աղբիւրները՝ որ հօս շատ խառ-
 նուած են իրարու հետ, նոյնպէս ալ
 Լուսաւորչի թագաւորին հետ ըրած
 տեսութիւնը կը զատեն: Բայց մկրտու-
 թիւնն ալ պէտք է ընտիր աղբիւրէն հա-
 մարել, վասն զի Յովհաննէս Մկրտչի
 տօնը տարւոյն առջի օրը հաստատելը՝
 յայտնի նշան է թէ անկէ առնուած է:
 Բաղդատութիւն մ'ալ միայն բաւական
 է իմանալու համար՝ թէ այն ամիսն յոր
 ըստ ընտիր աղբիւրը՝ թագաւորն սպա-
 սեց Լուսաւորչին, նոյն է միւս ամիսն
 հետ յոր ըստ կղերական աղբիւրն նա.
 խապատրաստութիւն եղաւ, և թէ Գրի-
 գորի հասնելուն համար հետագայ եր-
 կրորդ տեղեկութիւնն՝ թագաւորն և
 կաթողիկոսն իրարու հանդիպելէն վեր-
 ջը « բազում ցնծութեամբ և ուրախու-
 թեամբ յաւանն դառնային » յեփրա-
 տէն, եղած բացատրութիւնը, նոյն է
 կղերական աղբիւրին բարձրաձայն քա-

րողած « մեծաւ ցնծութեամբ » բացա-
տրութեան հետ, որ Եփրատի մէջ ե-
ղած մկրտութենէն դառնալէն վերջը
կ'ըլլայ. մկրտութենէն առաջ « լի առ-
նէր (Գրիգոր) զամենեսին շնորհիւ ա-
ւետարանին » բացատրութիւնը՝ ուղ-
ղակի մկրտութիւն կ'անկարկէ, որուն
լիովին նկարագիրն ներգաշնակութեան
համար համառօտած է. Որով աղբե-
րաց խառնուրդէն կազմուած մանրա-
նկարէն վերջը ինչ որ կու գայ կղե-
րական աղբիւրէն է, իսկ ինչ որ ան-
կէ առաջ է՝ ընտիր աղբիւրէն. Կղե-
րական աղբիւրին մէջ (Գլ. 142, էջ
608) սպիտակ ջրիք սրբոց նշխարքը
կրող կառքը կը քայեն. մինչդեռ յա-
ռաջ (ի Գլ. 139, էջ 602) « զԳրիգոր
ինքնին հանեն յոսկիապատ կառան
արքունականս՝ սպիտակաձիգ ջրուոցն », որ
պատմութեան յայտնի տարբերու-
թիւն է, բայց աղբերաց այլ և այլ
ըլլալուն և թէ պատմական նմանու-
թեան կը վկայեն. Կեսարիա քաղքին
անունն ալ (ի Գլ. 130, էջ 608) « զոր
ըստ հայերէն լեզուին Մաժակ կոչեն »
ընտիր աղբեր լեզուէն գուրս լեզուի մը
գործածութիւն կը յայտնէ, որուն լե-
զուն բուն պարթևական լեզու պիտի
ըլլայ. Կղերական աղբիւրին եկեղեցա-
կան ոգին դեռ աւելի գուրս կը ցատկէ
ճամբորդութեան պատմութեան մէջ,
լուսաւորչին Սեբաստիա երթալուն և
անկէ իր հետը առած կրօնաւորաց
պատմութիւնը (Գլ. 140, էջ 604-605).
Կղերական աղբերն կը վերաբերի, որով
հետև նոյն տեղը այս գուրսէն եկող կրօ-
նաւորաց վրայ երկու անգամ խօսք կ'ըլ-
լայ, զոր կրնանք ապացուցնել թէ կղե-

րական աղբերէն է, վասն զի ամբողջ
գրքին մէջ մի անգամ միայն կը յիշուին
կրօնաւորներն, առանց ըսելու թէ այս
կամ այն քաղքէն են. Շնորհապիւտները
խարաց մօտաւոր յիշատակութիւն պէտք
չէ զմեզ շփոթել որոնք ընտիր աղբեր մէջ
շատ տեղ դեռ կը խաղան. պէտք ենք
գիտնալ, որ ուր որ այս նշխարները ի-
րենց փոխադրեալ հատուածոց մէջ կա-
նուի կը հանդիպին, այնպիսի կերպով
կը յիշուին իբրև թէ ալ ամենեկին վրա
նին պիտի չմտածուի. (Գլ. 142, էջ 608).
Բայց ասով չենք կարծեր թէ Գրիգորի
կաթողիկոս ընտրուելը, Կեսարիա եր-
թալն և 'ի Հայաստան նորէն դառնալն՝
իրենց ամբողջութեամբ մէկտեղ կղե-
րական աղբիւրէն ըլլան. Նախընթաց
պարբերութեանց մէջ, որ Լուսաւորչի
Հայաստանի գաւառաց մէջ ըրած քա-
րոզութիւնները կը պատմեն, պատմու-
թեան թիւը յայտնապէս կ'ընդհատի.
հատուածով մը, յորում կ'ըսէ թէ « Եւ-
սա հառարակ ամենեցուն սերմանեալ
զաստուածպաշտութեան զբանն, և զա-
մենեսեան 'ի Տեառն ճանապարհի կա-
ցուցանէր, գիտուն լինել պատուիրա-
նաց արարչութեանն. Եւ յամենայն քա-
ղաքս Հայոց և 'ի գեօղս և յաւանս և
յազարակս երեսեցուցանէր զտեղիտանն
Աստուծոյ. Բայց ոչ առնէր յայտ զհի-
մնարկութեանն զհետ, ոչ սեղան ուրեք
ուղղել յանուն Աստուծոյ. զի չունէր
զպատիւ քահանայութեանն ». (Գլ. 131,
էջ 537) . . . յորում կը զնէ նոյն ծանօ-
թութիւնը, թէ « Առնոյր (Գրիգոր) այ-
նուհետև զՈրչականեաց տոհմի որերն,
'ի վարժս վարդապետութեան :

Կը շարունակուի :